ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 4

ք. Երևան **08.01.2018թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 05/14.2/7272-17, ՀՀ բնապահպանության 3/02.2/30664-17, ՀՀ գյուղատնտեսության ԱՀ/ԱԲ-1/10992-17, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների 07/25.2/7057-17, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 05/16.3/11929-17, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 02/14.1/22476-17 նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի 06/11.2/7770-17, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՆԳ/7375-17 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի **Գնդեվազ** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ջերմուկ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության **0.07 հա** /կադաստրային ծածկագիր՝ **10-016-0214-0117/** վարելահողը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա /ավտոտեխսպասարկամ կետ/,

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի **Գնդեվազ** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ջերմուկ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից **0.1128 հա** /կադաստրային ծածկագիր՝ **10-016-0222-0075/** այլ հող փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա /առևտրի և սննդի օբյեկտ/:

Հանձնաժողովի նախագահ՝ _Վ. Տերտերյան

քարտուղար՝ _Ռ. Մինասյան